


Հ Ա Ս Ց Է
Rédaction du Journal arménien
ARCHALOUYCE
(EGYPTE) LE CAIRE



ՊԵՏԱԿԱՆ
ՍԳԻՊՏՈՍ
Տարեկան դրոշմը 30
ԱՐՏԱՍՆԱՆ
Տարեկան գրանց 10

Բաժանորդի ԶԱՆԵՆՈՒՄ ԵՆՈՒ ՓՈՍՏԱՐԷԳ ՎՃԱՐՈՒՄԷ ԳԵՐԾ ԱՅԻՍ ԸՎԱՆԸ .

Չի հրատարակուած ձեռագիրները
եւ չե՛ն տրուիր .

Բաժանորդագրութիւնը կանխիկ է, իսկ
ծանուցումները կ'ընդունուին մասնա-
ւոր համաձայնութեամբ :

Քառս - ներ - ետքազոյն թեան
ԵՂԻՅԷ ԹՈՐՈՍԵԱՆ

Թե՛ ԱՐՇԱԼՈՅՍԻ եւ թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ
վերաբերեալ նիւթական խնդրոց հարևար
պիտի և ղիկնէ նիւթագրութեան հասցեով
թերթի Մասնագրութիւն, որ է՛

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՍՏԱՆԱՆ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԻ ՀԱՅԱԹԵՐԹ

ԿԵ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԻ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրները ուղղակի պատասխանա-
տու են իրենց գեղծներուն

ՀԱՏԸ 20 ՓԱՄԱ ՈՂՋ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՔԵՐ

ՆՈՐ ԱԺԻԱՏԱԿԻՑՆԵՐ

Լաւ և ազնիւ տրամադրութիւն-
ներով օժտուած, ազգին ընդհան-
րական ցաւերուն հետ միշտ գլուխ
դրելի ողբացող մեր նոր աշխատա-
կիցներէն մին՝ ԽՈՐԷՆ, ծածկանու-
նով կ'սկսի իր աշխատութեան բա-
ժինը նուիրել ազգին, «Արշալոյս» ի
մնայուն աշխատակցութիւն խոստա-
նալով ինքնաբերաբար :

Ուժի զինուոր մը չէ ԽՈՐԷՆ .
ընդունեան և բարոյակամի սիրահար՝
զինքը մօտէն ճանչցողներուն համա-
րումը լի ու լի կը վայելէ :

Իր անդրամիկ յօգուածը թե-
րեւս քիչ մը խիստ երկի ոմանց, սա-
կայն Եւրոպական լեզուներու մէջ
ունեցած իր հմտութիւնը հզօր ա-
ջակից մը պիտի ըլլայ իրեն՝ յետ այ-
սու Ամերիկեան, Անգլիական, Գեր-
մանական և ուրիշ զարգացած աշ-
գերու օրինակելի բարբերուն ծա-
նօթացնել մեզ, անոնց մասին ըն-
դարձակ ուսումնասիրութիւններ տա-
լով Հայ ժողովուրդին, որը գի-
տէ լաւ օրինակելի և շատ անգամ
իրեն վարպետները գերազանցել :

Կար և յաջողութիւն մեր այս
նոր աշխատակցին :

Առաջիկայ թիւէն սկսեալ ու-
րիշ նոր մը պիտի ողջունենք, որ
Ասիական գաւառներուն ենթարկը-
ւած դժբախտութեանց պատկերնե-
րը պիտի գծէ՝ անտարակոյս վեր ի
վայր շրջելով քարացած այն սրտե-
րը, որ հայ ցաւին հանդէպ խիստ
անտարբեր վերաբերում մը ունին և
առիթ չեն փախցներ հայ տառա-
պանքը հեգնելու . . .

«Ասպար» այս է իր ծածկա-
նունը գաւառներու այդ նորաբող-
բոյ ծաղիկին, որ որչափ տակաւին
երիտասարդ՝ նոյնչափ փայլուն ա-
պագայ կը խոստանայ գրական հրա-
պարակին համար, եթէ գիտնայ ազ-
նիւ վերաբերուիլ իրեն առջև բաց-
ւած ասպարէզին հետ :

Կար և յաջողութիւն իրեն հա-
մար ալ :

Այս անգամ նիւթերու առա-
տուծեան պատճառաւ ստիպուեցանք
«Արշալոյս» ին կէս թերթ մը կցել
մեր սեփական զոհողութիւններով :
Մեր այս քայլն ալ սխալ մեկնու-
թիւններու դուռ չ'պիտի բանայ ան-
շուշտ :

Կը յուսանք մօտ օրերու մէջ
կրկին ծաւալով հրատարակել «Ար-
շալոյս» ը միշտ նախաթաթեթ պա-
հելով :

ԽՄԲ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Առ նորին Գերապատեալ ին
եզնիկ Եպիսկոպոս Ապարուինի

Ս. Հայր .

Թոյլ տուէք ինձ որ հիացումս
յայտնեմ Ձեր այն պերճախօս քա-
րոջին, զոր ունկնդրելու հաճոյքը
ունեցայ Մարկոսյանի կիրակին :
Դառնագոյն շեշտերով կը հնչեն
տակաւին իմ լսելեացս այն աներ-
կիւղ խոստովանութիւնները, թէ՛
«Ամեն տեղ հայը անմիաբան է .»
թէ՛ «չկան միմակ և միմակ երկու
հայեր աշխարհի վրայ որ զիրար
հասկնան և սիրեն, ամեն տեղ և
ամենուրեք հայը սոյն դարչելի և
վատ հոգին է որ կը կրէ :» Ուրեմն
դատապարտեալ ազգի մը զաւակ-
ներն ենք՝ կրելով արիւն մը որ
մեր նախնիք փոխանցեցին մեզի :
Այո՛, ամէն հայու երակներուն մէջ
կայ արեան խառնուրդ մը՝ սիրոյ
և ատելութեան, քաղութեան և
վատութեան . և վերջապէս արիւն
մը անմիաբանութեան գարշելի ախ-
տին՝ որ միշտ յաղթող կը հանդի-
սանայ :

Արդ, Հայը իրաւունք ունի
հարցնելու Ձեզ ո՞վ սիրելի Հայր,
թէ՛ ո՞վ ըրաւ մեզ այսպէս . մենք
ինչո՞վ ենք մեղաւոր . ինչո՞ւ կը
դատապարտէք հայը իբրև «ատող
և անմիաբան» . Այո՛, հայը կընդու-
նի թէ ինք անմիաբան է . բայց ո՞վ
ըրաւ մեզի այսպէս, քանի որ սա
բնական յատկութիւն մը դարձեր է
մեզի : Ձէ՛ մի որ մենք ժառան-
գորդներն ենք մեր նախնեաց ան-
միաբան արիւնին :

Վայրկեան մը հետեւեցէք մեզի
հետ մտքով նախկին վայրենի ,

բարբարոս և մարդակեր ցեղերուն ,
որոնց մեծ մասը քաղաքակրթու-
թեան և քրիստոնէութեան դասեր
կուտան մեզի . նախկին վայրենի
մարդակերը՝ այսօր ուսման և դի-
տութեան առջև տեղի տուած՝
մարդկութեան և աշխարհի պար-
ծանք եղող շնորհալի և մեծ մար-
դեր տուած է :

Գիտութիւն, ինքնագիտակցու-
թիւն, և Քրիստոնէութիւն երեք
անբաժան ընկերներ են, որոց մի-
ոյն թերացումը մեզի պէս ազգ մը
առաջ պիտի բերէր :

Ձէ՛ մի որ քրիստոնէութիւնը
չէ կարողացած արմատախիւ ընել
մեր վայրենի բնազդը եղող անմի-
աբան հոգին . Դարբու երկայն շըր-
շանին մէջ Ալեքսեաններու, քաղց-
րալուր մեղեդիներու տակ թովուե-
ցանք՝ նման գառազեղի զսպուած
առիւծին՝ բայց պատրաստ ամէն
րոպէ փարատելու իր տէրը, երբ
գազանային արիւնը իր շրջանը ընէ :
Քրիստոնէութիւնը գազանազուպի
մը հրաշալի պաշտօնը կը կատարէ
և թովելով զգացումները երկիւղիւ
կը քնացնէ մեզ, արթննալու հա-
մար թերեւս աւելի ամենի :

Անշուշտ աններելի պիտի ըլլար
հետեւեցնել մեր այս տողերէն թէ՛
քրիստոնէութեան հակառակ կը խօ-
սինք . Մենք ո՛չ թէ նորա բարձր
հոգեւոյն հակառակ չենք՝ այլ զայն
կ'ընդունինք մեր ամենատարական
պիտոյից մին, որ պաշտօն ունի
մարդը ազնուացնելու և բարձրաց-
նելու : Քրիստոնէութեան կը պար-
տինք այսօրուան աշխարհը՝ որոյ
քաղաքակրթութեան անհուն բա-
րեքները կը վայելենք . բայց քրի-
ստոնէութիւն մը որ հիմնուած է Ինք-
նԱԿԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ և ՍԿՁԲՈՒՆԻԻ
վրայ :

Դուք Ս. Հայր, իրաւամբ
կ'ըսէք թէ՛ «չկան միայն երկու
հայեր, որ զիրար հասկնան» . բայց
ես պիտի ըսեմ՝ շատ քիչ հայեր կան
աշխարհի վրայ որ ունեցած ըլլան
ինքնագիտակցութիւն եւ սկզբունք-
(գարագիծէր) :

Միթէ՛ մեր եկեղեցին սորվե-
ցուցած է ինքնագիտակցութեան
ուղին . միթէ՛ սկզբունք ունեցող
ա՞զգ մըն ենք : Ահա այս երկու

չինիչ և հսկայ ուժերը կատարեալ-
պէս կը պակսին մեզի : Որքան Ձեր
գանգատը արդարացի է, նոյնքան
արդարացի է թէ՛ չկայ մի հայ, մի
առաջնորդ, մի ուղեցոյց որ առաջ-
նորդէ այս դժբաղդ ժողովուրդը
ինքնագիտակցութեան և սկզբունքի :
Արդարեւ մենք կատարելապէս դժ-
բաղդ ազգ մ'ենք :

Մենք մեր ուսուի վէրքին վը-
րայ ողբալէ աւելի՝ ճշմարիտ վերա-
բոյժի մը կը կարոտինք, ախտաց-
եալ մասերը բուժելու համար :

Մեր եկեղեցին եղած է ճըշ-
մարիտ վերաբոյժ մը . դարբու
փորձաւորութիւնը նորա հակառակը
կը պնդեն . նա կատարեալ հիւան-
դապահ մը եղած է և իր գեղեցիկ
մեղեդիներովը լաւ քուն մը պար-
զեւած է մեզի ու մեր հուժկու ջի-
ղերը թուլցած են . մեր եկեղեցին
իր յաւիտենական միօրինակութեամբ
մեր մտքերը ցնդեցուցած է, հա-
կառակ սէր և եղբայրութիւն հոսող
շարական և աղօթքներու՝ Հայր եղ-
բայրասպան ատելութեամբ լեցուե-
ցաւ . մեր եկեղեցին սիրոյ համբոյր-
ներով մեզի իրար մօտեցնել ջանա-
ցած է՝ բայց հայը զիրար ատած է .
զիրար կոխտած է և մենք զմեզ
յաւիտենական յանկերգով մը կը
կոչենք . անմիաբան հայ :

Բայց կանգ առէք այս տեղ
վայրկեան մը, ո՞վ դուք կրօնի
ուսնվիրաներ, հայուն Առաջնորդ
և Հովիւներ : Դուք յաճախ Ձեր վե-
հապանձ ճակատը աներկիւղ վեր
բարձրացուցած ահեղաբար կը գո-
չէք ու կը դատապարտէք հայուն
անմիաբանութիւնը, հայուն ատե-
լութիւնը և կը կրկնէք թէ՛ Ձեր
բաժինը եթէ տանջանք և մահ ալ
ըլլար՝ տակաւին պիտի գոռայիք
հայու երեսին թէ՛ նա անմիաբան
է, եղբայրատեաց է, բայց Ձեր ըստ-
րուկ և անմիաբան կոչած հայուն
արիւնը որդար Աբելի արեան պէս
պիտի բողբէ գերագոյն ատեանին
առջև թէ՛ «ԻՈՒՔ ԸՐԻՔ ՄԵՉ ԱՅՍ
ՊԷՍ» :

Այո՛, դուք չ'սորվեցուցիք մե-
զի «ինքնագիտակցութեան և սկզբ-
բունքի» տարրական ամենակարևոր
գիտութիւնը, Ազգ մը առանց ըս-
կըզբունքի և ինքնագիտակցութեան

ու խընարը կինը գիտցած է իւրացնել օտար արթիթիւնի մը նորածնու- թեանց բոլոր անպիտան պչրանքները : Եթէ հագուստը քիչ մըն ալ հայելին է ներքին մարդուն խորհեակերպին , կարելի չէ չի մտածել որ այդ խորթ պչրասիրութեան ցուցադրանքը արտա- նիշն է ընտանեկան ներքին բարեբու- ինկածութեան : Չէ , պչրասէր կին մը կարելի չէ որ ժողովուրդ տանտիկին մ'ըլլայ . եւ գէթ ասոնք օտարին լաւ կողմերն ալ իւրացնել գիտնային . . . :

Ու կը տխրի մանաւանդ այդ ա- մուրի երիտասարդներուն թիւը տեսնե- լով : Երեսունը անցուցած երիտասարդ- ներ ընդհանրապէս , որոնք այս կամ այն պատճառաւ ամուսնացած չեն ու ամուսնանալու ալ ոչ կամը ունին եւ ոչ յոյս : Արդէնքները , բոլոր բնական ու անբնական խոչնդոտները մէկ մէկ չքմեղանքներ են իրենց քով , հոգ չէ թէ փոխառով պիտի փճանան ու ամ- որդէ ազգն է որ պիտի տուժէ իրենց վերաբերումն : Ոչ խորող կայ արդէն իրենց վրայ , եւ ոչ ալ զիրենք մեղադ- րող մէկը : Ի՞նչ պէտք ունին զլուսնին չոր բարձին տակը դնելու : Ոմանք ար- դէն զաղթական արհեստուոր երիտա- սարդներ են , պիտի սպասեն որ օր մը հայրենիք վերադառնան . զեռ կանուխ է ալ իրենց համար , դրամ չի նշու- զիրք մը ստեղծելու պէտք ունին . իսկ եթէ ամուսնանալ ալ ուզեն , դժուա- րութիւնները շատ ու շատ են : Իր քա- ղաքէն յարմար աղջիկ չի կայ : Պո- սեցին շտայլ կըլլայ , ամէն սէզոնի նոր շրջազգեստ մը , նոր գլխարկ կու- ղէ , փոտրա եւ հարկեր տեսակ ոչինչ- ներ կուղէ , լաւ տուն , լաւ կերուխում . Ինքնորոշուած անկ կըլլայ , կեսարացին նանկ , եւ ինչո՞ւ անպարկեւ , քանի որ ազատ կենակցութիւնը , փոխառ ամենէն ընդունուած բանն է քաղաքա- կրթեալ կողմէն ազգերու քով ալ : Իսկ ուրիշներ , որոնք զիրք մը չին ան ան իրենց համար ու ամուսնանալու տա- րիքն ալ անցուցած , չեն ամուսնանար , որովհետեւ անտանիկ պահանջներ ու- նին , քիչով չեն կրնար դո՛ւր ըլլալ , եւ յետոյ կեանքը պէտք է վայելել ամեն գնով . սրճարան , ճաշարան , թատրոն պարահանդէս , գեղանի կիներ զորն որ կամիս , ահա ձեզի աշխարհի արքայու- թիւնն ու դժոխքն ալ :

Ու կը մտածեմ , թէ՛ եթէ հոստեղ ուր տեղական օտար բարեբեր չէին կըր- նար այնքան սերտորէն ազդել մեր բարեբուին վրայ , մեր բարեբեր ընդ- հակառակն օրէ օր վատթարանալու վը- րայ են : Ա՛լ երեւակայեցէք թէ ի՞նչ ըլլալու է հայը՝ թիթեւ սուրկութիւն- ներ շուտով ընդօրինակելու միշտ ըն- դունակ՝ աւելի լուսաւորեալ կեդրոն- ներու մէջ , Փարիզ եւ Ամերիկա . . . :

Աստու՛ած իմ . երեւակայելու բա՛ն է այս , մանաւանդ Ամերիկայի համար , ուր աղջիկի սով ալ կայ կըսուի մեզի , ու հոն ստիպուած են հայրենիքէն աղ- ջիկներ բերել տալ , խեղճ ամուսնանալ ուզող մարդիկներուն հազարուէկ զըժ- ուարութիւններ , նիւթական զոհողու- թիւններ պատճառելով , թո՛ղ խաղթու- թիւններու այն զիւցազնիկական-աշա- ւեշտական գարշելի տեսարանները ո- րոնց ախուր նկարագրութիւնները կը գտնենք Ամերիկայի թերթերու մէջ :

Տեսէք թէ ի՞նչ կըսէ Պոթոմի « Հայրենիք » ին մէկ թղթակիցը :

« Չգետի , գլխարկի , կօշիկի , վերջապէս արտաքին զարդերու ամե- նուն ալ նորածնութիւնները իւրացը- նելէ վերջ , Ամերիկեան ինկած բար- քերն ալ իւրացնելու սկսեր ենք վեր- ջին ժամանակներս :

« Ինկածութիւններուն ամենէն սոս- կալին՝ ամուսնական անհամաձայնու- թիւններ , ամուսնալուծումը սկսեր է նորութիւն մը դառնալ մեր մէջ եւ կարծես հայ փոփոկ սեռը մասնաւոր

հակում մը ունի այս « ինկած » նորու- թեան :

« Այս կարգի պատկերներ շատ են հիմայ չորս կողմը . մէկը իր քմահա- ճոյքներուն պատշաճ չի դտներ իր ա- մուսինը , ուրիշ մը ամենաչնչին յան- ցանք մը խոչնդոտող կը գիտէ եւ անա քանի մը ամուսն ամուսնի , տա- կուին իրար չի հասկցած , ախուր պատկերներու զերակատարները ըլլա- լէ վերջ՝ զիրար կը թողուն , առանց ամչնալու , առանց խիպ զգալու » :

Ու հոս թղթակիցը մեզի կը պար- ղէ հայրենիքէն աղջիկ բերելու անպա- տեհութիւններն ու անկարելի խաղթու- թիւնները :

Ու՞ր պիտի տանին մեզի բարեբ- րու այս ինկածութիւնը , ամուրի ու փոխառով մեծցած երիտասարդներու ինչպէս եւ տունը մնացած փոտրազարդ , պճրասէր , ու քմահաճ , ու թիթեւ սուրկ աղջիկներու քանակութիւնը :

Հարցում մըն է այս որ յղի է իր պատասխաններով , եւ որով զբաղել աւագ պարտականութիւնն Սրբազան Առաջնորդներուն , ճնողներուն , վար- ժարանին , խղճամիտ մամուլին եւ իր հեռաւես աշխատակիցներուն :

Տարի մը ստաջ՝ տեղույս Արա- բական թիւրի մը խմբագիրը Փարիզ կ'այցելէ , ու խեղճ մարդը՝ հոն՝ խե- լացնորումներ կուռնենայ Փարիզի ժո- ղովուրդին սրճարաններու մէջ անցու- ցած ցօփ եւ անպատկառ կեանքը տես- նելով . ու , « պակաս թող ըլլա՛յ մենք , կը քաջագոյնչէ , այն քաղաքակրթու- թիւնը որ այս տեսակ Սոցիալ Գոմորիան բարբեր պիտի բերէ մեզի » :

Վերոյիշեալ նմանազոր կրնայ յե- տադիմական մէկը եղած ըլլալ ու քա- ղաքակրթութեան տարբեր բարիքներն ալ չի տեսնել , բայց ընդունինք միեւնոյն ատեն թէ՛ այսօրուան կրօնական ըզ- զացումին պակասը , ազատ կենակցու- թիւնը , փոխառ , կանանց պչրասի- րութիւններն ու զիւրամտաչելիութե- թիւնը նոյնչափ այլապիտակութիւնն ու փը- ճացումն նշաններ են Արտասահմանի հայութեան համար , ա՛յնչափ՝ որչափ թուրքին լուծը՝ մեր Հայաստանի խեղճ եղբայրներուն քով :

Ս. Օ

ՍԵՂԱՆՍԻՈՐԱԿԱՆ ՏՈՒՆ

— 0 —

Մուսի փոյտը քիւ 6, Սիւնիքի մասնա-

ճիւղին ֆով . Ժիւսքի դիւսց .

Կը գնէ եւ կը ծախէ հրապարակի վրայ շրջաբերող բոլոր կարեւոր արժե- թղթերը , մասնաւորաբար Քրէտի Ֆոն- սիէի հին եւ նոր , Բուսէլի երկաթուղ- եաց եւ Բանամայի ֆրանսական վաւե- րացնալ արժեթղթերը , որոնց սկզբէն ց'այսօր շահող թիւերուն ցուցակներն ալ ունի :

Արժեթղթերու արգի խիտ նպաս- տաւոր գնիւն կրնան օգուտիլ Երկր- տաքնակ մեր ազգայինները մեզի զի- մեկով :

Մասնավճարներով — 25, 50, 100 - կարելի է արժեթղթերու տիրանալ , եւ մատչելի պայմաններով՝ աւանդի փո- խարէն՝ փոխառութիւններ կնքել :

Սեղանաւորական ամեն տեսակ գործառնութեանց , եւ առեւտրական ամեն կարգի Պոստալ զեղչելու պատ- րաստակամութիւն :

Սեղանաւորական եւ Պորսայի գոր- ծառնութիւններ եւ ա՛յս կարգի գոր- ծերու վերաբերեալ դաւանութիւն եղած յանձնարարութիւններ փութով կը կա- տարուին :

12-50

ԱՐՄԵՆԱԿ ԹԱՇՃԵԱՆ

ԱՏՈՄ ԱՍԼԱՆԵԱՆ ԸՆԴԴԵՄ « ԱՐՈՒԿԻ » ՕՐԱԹԵՐԹԻՆ

Անցեալ Չորեքշաբթի 22 Ապ- րիլ (ն . տ .) Խառն Դատարանաց Նախագատ սենեկի (la Chambre Sommaire) Նախագահը՝ Դատաւոր Էյման , իր դատավճիռը արձակեց « Բրօկէի » գէմ , ուրկէ Պ . Առ- լանեան կը պահանջէր 100 օսկւոյ ֆրասահատուցում իբր պատուպին՝ և բոլոր Եզրկատուի ու Եւրոպայի թերթերուն մէջ դատավճուոյն հը- րատարակութիւնը :

Հայ հանրութեան հետաքըք- րութեանը գոհացում տալու համար յիշեալ դատավճուոյն ազատ թարգ- մանութիւնը կ'ընենք : Ընդունելով միանգամայն որ՝ սոյն դատավճիռը Ատոմ Առլանեանի պատուասիրու- թիւնը զգուող հանգամանք մը չունի :

ԴԱՏԱՎՃԻՌԸ

Նկատելով թէ ֆրասահատուցում պահանջող կողմը չի՛ մխտեր ճշտու- թիւնը ա՛յն իրողութեանց , զոր ամ- բաստանեալ կողմին թերթը պատմած է՝ ֆրասաբեր նախադրած յօդուածներու մէջ :

Թէ՛ կնդուենի որ՝ լրագրողին (Մ. Թարգ. Արիարի) սպանութեանը հե- տեանօք , հոսիկանութիւնը իր սու- նը խուզարկած է այս սպանութեան հեղինակներուն եւ մեղսակիցներուն գէմ բացուած ընտելութեան մը միջոցին , Սպանութիւն՝ որ հետզհետէ յուզած է հանրային կարծիքը եւ որուն մէջ ըս- պանեալ զոհին հայրենակիցները կու- ղէին տեսնել կանխամտածեալ դաւադ- րութեան մը գործադրումը :

Թէ՛ կընդունի նաեւ որ՝ ոճրին յաջորդող կիրակիներէն միոյն մէջ , հաւատարմաբար գումարման մը ա- տեն (Մ. Թ. Միթիկը կ'ակնարկէ) հը- րապարակաւ մատնանշուած է իբրիւ մեղսակից խնդրոյ առարկայ սպանու- թեան եւ պահանջուած է Եկեղեցիէն արտաքուստ իբրեւ անհրաժեշտ նախ քան կատարումը կրօնական արարողու- թեանց (*) :

Նկատելով թէ կը հասկցուի որ այսօրինակ պայմանի մը մէջ պահանջ- ընդդէմ կողմը իրաւունք եւ պարտակա- նութիւն ունենալ կարծած ըլլայ այս- քան ծանր զէպերու հրատարակումը իր թերթին մէջ :

Նկատելով որ եթէ ամբաստանեա-

(*) Մասնօթ . նմա . — Մեծանուն փաստաբան Մէթրը Քարթոն ար Վիար եւ վճարածակ Դատաւորը Պ. Էյման՝ բա- ցատրութեան այս ձեւով Հայ Եկեղեց- ւոյն լայնարձակ թոյլառութիւնները ժխտած եւ սեղմած կըլլան : Երբ Մը- չեցի Մուշեղ , ոճրագործի դատավճուով կախաղան բարձրացնելու կը տանէին՝ Տէր Մամբէ Քահանայ կառավարական թոյլառութեամբ զայն փոխադրող կառ- քին մէջ միտանէր , եթէ չենք սխա- լիր՝ միշտեւ կախաղանը հաստատուած տեղը : Ըսել է մեր Եկեղեցիին ոճրի մեղ- սակցութեան ամբաստանութեամբ մը իր ո՛ր եւ է մէկ անգամը չ'արտաքսեր « նախ քան կրօնական արարողութեանց կա- տարումը » , եթէ Երեւի . ժողովոյ քը- լէարկութիւնը եւ ընտրութիւնները կ'ակնարկուի , անիկայ լրագրողին տար- բեր եւ Եկեղեցական խնդիր մը չէ այլ՝ ազգային , քաղաքական եւ վարչային : Այսպիսի վճուական պարագայի մը մէջ փաստաբան մը կամ դատաւոր մը ըլ- լալէ աւելի՛ տիրացու մը ըլլալու բան մը կարծէ եզեր ուրեմն , իրողութիւն- ները իրենց բուն բառերովը բացատրե- լու համար , որպէս զի կրօնասիրական զգացումներ չ'վիրաւորուին :

լին ըրածը միայն այս ըլլար , պահան- ջող կողմին դատը դժուարաւ պիտի բա- ցատրուէր :

Բայց նկատելով թէ ամբաստանու- ղը ատկից աւելին ըրած է :

Թէ ամբաստանեալը աւելցուցած է վերոյիշեալ զէպերուն պատմուածքին — որը թէպէտ աւելի խոհեմութիւն պի- տի ըլլար վերապահութեամբ եւ առանց անուն յիշատակելու պատմելու — անձ- նական հաւատուածներ որք ապացուց- ուած չ'են եւ ոչ ալ տակաւին ճշտուած , խօսելով՝ դատական նոյն իսկ նախա- կան որոշում մը չի տրուած եւ խօսելով այնպէս մը որպէս թէ՛՝ այդ որոշումը պահանջող կողմին աննպաստ կերպով մը տրուած ըլլար :

Նկատելով թէ որքան ալ լայնօրէն բարձրուի մամուլը իրաւունքները եւ ա- ռանձնաշնորհութիւնները եւ այս իրաւանց ու առանձնաշնորհութիւններուն գործադ- րումը , կարելի չ'է չի պահանջել որ այս գործադրումը սահմանափակուի մէկ կողմանէ՝ հրատարակութեան տրուելիք լուրերու բացարձակ պէտքին մէջ եւ միւս կողմանէ՝ յարգուի անհատական իրաւունքները այն անձանց՝ որոնք յա- րաբերութիւն ունին այս լուրերուն հետ :

Նկատելով թէ պէտք է սկզբումը ընդունիլ որ ամբաստանեալ կողմը անց- նելով իր իրաւանց սահմանը հեղինակն է զէպի մը որուն ֆրասաբեր հետե- ւանքներուն պատասխանատու է հան- ղէպ պահանջող կողմին :

Բայց նկատելով որ դժուարին է հաւատալը թէ՛՝ ներկայ դատին պարա- դաններուն մէջ՝ ամբաստանող կողմը զանհատելի ֆրաս մը կրած ըլլայ :

Արդարեւ , ֆրասին շարժաթիթը — եթէ ֆրաս մը կայ կամ կրնայ եղած ըլլար — պէտք է գտնուի այն իսկ ամ- բաստանեալին հաստատած իրողութիւն- ներուն մէջ , իրողութիւններ՝ որք կը կրին դրօշմը անկերեւ հրապարակումի մը եւ ոչ թէ այս զէպերուն պատմը- ւածքին մէջ :

Թէ ինչ որ լիովին կ'ապացուցա- նէ այն ալ ամբաստանող կողմին բըռ- նած ընթացքն է որ մամուլը միջոցաւ եւ իր ընտրութեան ձգուելիք հինգ Ե- զրկատական թերթերու մէջ հրատարա- կութեամբ հատուցումի մը եզրակաց- նելէ վերջ — ինչ որ արամաբանօրէն իր դատին զլիւսաւոր առարկան ըլլալու էր- թողուց այս եզրակացութիւնները եւ շատացաւ դրամական պահանջմամբ մը եւ ասիկայ հակառակորդ կողմին անձե- ոքնահատութեան բացառութեան մը (ex- ception d'incompétence) առաջ բերու- մին վրայ , մէկ ոսկի հատուցում կո- րոչէ ամբաստանողին վճարելի :

ԱՐՓԻԱՐԻ ՍՊԱՆՄԱՆ ԱՌԹԻՒ

ԿՈՎԿԱՍՍԱՅԱՅ ԳՐԱԳԵՏՆԵՐՈՒ

ԲՈՂՈՒԿԸ

— 0 —

« Աղբիւր — Տարազի » յարգելի Խմբագրին՝ Տիգրան Նաղաբեանի հրաւերին վրայ , խուժա մը Կով- կասահայ « գրականագէտ — Ժուրնա- լիստներ » Փետրուար 28 ին , հա- ւաքուեր են « Տարազ » ի Խմբագ- րատունը եւ Արփիարի սպանութեան շուրջ խորհրդակցութիւն մը ունե- ցեր են , որու մասին կը կարգանք « Մշակ » ի մէջ :

« Ժողովին ներկայ էին 25 գը- րականագէտներ — Հայ գրողներ , տեղական Մամուլի ներկայացուցիչ- ներ « Մշակ » « Խմբագրալ » « Երկ- րի Չափ » « Գործ » « Մամուլ » « Աղբիւր — Տարազ » « Կովկաս » և

էլ միաձնի ճեմարանի ճետուչ Պ. Մ. Բերբերեան :

Ժողովը նախագահ ընտրեց Պ. Հ. Առաքելեանին, որ մի քանի խօսքով բացատրեց ժողովի նպատակը և առաջարկեց կարծիքներ յայտնել :

Ժողովականներից ոմանք առաջարկեցին որ պետք էր հրաւեր ուղարկել և օտարազգի մամուլի ներկայացուցիչներն, որոնցից շատերը փախաբեկ են մասնակցիլ, բայց հրաւեր ստացած չլինելով՝ չեն վստահացել գալ :

Մի քանիսը առաջարկեցին յետաձգել և յատուկ հրաւերներ ուղարկել բոլոր Հայ գրողներին և Վիպասան, Բանաստեղծ, Ժուրնալիստ, որովհետև տեղամաս Հայ գրականութեան, ժողովին մասնակցելու չէին եկել իրանց գրականութեան կորիֆէյ համարող գրողներ, Վիպասաններ, որոնք ամենից առաջ պետք է ընտապէին բարձրացնել իրանց բողոքի ձայնը, իբրև գրչի և մտքի ներկայացուցիչներ, գարշելի ոճը բազմաթիւ են ղէմ, ուղղուած գրչի և մտքի մի նշանաւոր ներկայացուցիչն : Ժողովականներից մինը պատասխանեց, որ 1) այդ գրողները բացակայութիւնը ամօթաբեր է իրանց՝ այդ գրողների և ոչ Հայ գրականութեան համար, 2) - գուցէ նրանք հնարաւորութիւն չեն ունեցել ներկայ լինիլ, հետևաբար վաղաժամ է նրանց վարձուքը որակել, 3) յետաձգել ժողովը առօգուտ է, այլ ներկայ եղող զբաղմունքները կարող են կայացնել իրանց որոշումը և ապա հրաւիրել նաև բացակայ գրողներին ստորագրել այդ որոշումը, որից յետոյ կարելի կը լինի որոշ դիրք բռնել բացակայ գրողները վերաբերմամբ, նայելով թէ նրանք ինչ դիրք կը բռնեն - կը միանան բողոքին թէ ոչ : Այս առարկութիւնը ընդունուեց և Ժողովը, սկզբունքով ընդունելով Պ. Աթանասեանի առաջարկած բանաձևը, միաձայն, ձեռնպահութեամբ մի հոգու (որ համաձայն չէր միայն բանաձևի խմբագրութեան հետ) կայացրեց հետևեալ որոշումը :

« 1908 թիւ Փետրուարի 28 ին « Տարազ » ի խմբագրութեան մէջ ժողովուած Հայ գրագէտ - ժուրնալիստների մի խումբ, քննութեան առնելով Եգեպտոսի Գահիրէ Գաղաբու Յունուար 29 ին Յայտնի հրատարակարկութեան գործիչ Պ. Արփիար Արփիարեանի (Հայկակ) սպանութեան դէպքը, և աչքի առաջ ունենալով՝ որ :

« Ա. - Արփիարեանն սպանուել է որպէս հրապարակարկ, որը մերկայանում էր որոշ խմբակի կողմից յեղափոխական գիւմակի տակ կատարուող զեղծութեանն ու յանցագործութիւնները :

« Բ. - Որ այդպիսի դէպքեր կըրուում են ընդհանուր կերպարանք որով և վտանգուում է գրչի և համազմունքների ազատութիւնը :

« Գ. - Որ այդ օրինակ երևոյթներն անբարոյականացնում են հասարակական գիտակցութիւնը :

« Որոշեց՝

« 1. - Արտայայտել բուռն զայ.

րոյթի և նողկանքի զգացմունք թէ այդ սպանութիւնը կատարող սճրագործների վերաբերմամբ և թէ այն բոլոր անձանց ու հասարակական խմբագրութիւններին, որոնք գրչի մշակի և ազատ խօսքի դէմ գործ են դնում բռնի միջոցներ :

« 2. - Ներկայ որոշումը տպագրել կովկասի բոլոր թերթերում, որպէս նաև արտասահմանում լոյս տեսնող Հայ պարբերական հրատարակութիւնների մէջ :

Այս բանաձևը ստորագրած են հետևեալ գրականագէտ - ժուրնալիստները :

Ռ. Խանազատ. Մ. Չմկեան, Տ. Նազարեան, Բոկ, Մալխաս, Տ. Զաւէն, Յովսէփ Գ. Տէր Պետրոսեան, Արտ. Օհանջանեան, Եսալեմ Հ. Առաքելեան Ա. Աթանասեան Գր. Վարդանեան. Խ. Բաբեան. Յ. Սալովեան, Ե. Լաւանեան, Նիկ. Զիգրանեան, Ա. Քալանթար, Մինաս Բէրբերեան, Ա. Մ. Եղէկեան, Աստ. Երեցեան, Յ. Պիճիկեան :

ՀԱՆՐՈՒԹԵԱՆ

ԴԱՏԱՍՏԱՆԻՆ

Մեր յարգելի ազգայիններէն ոմանք կածելով թէ Տ. Եղիշէ Թորոսեանի անձնական խնդիրներն են, որոնցմով կ'ըզազէր խմբագրութիւնս՝ զանազան մեկնութիւններ տալ փորձեցին մեր թոյլտուութիւններուն :

Փութանք ըսել որ բացարձակապէս կը սխալին այդպէս մտածողները, որովհետև իրենք իրենց մեղքին պատճառները ունին այդպէս մտածելու, ըսելու և տարածայնելու, իսկ մենք ալ՝ մեր կատարած մանրադրոյիս հետազոտութիւններուն հետևանքով՝ ամենանոցոր պատճառներ ունինք ասիկայ զուտ հանրային խնդիր նկատելու և ըստ այնմ ալ վարուելու :

Տ. Ե. Թորոսեանի սճրագէտքըն երեք շրջանի կարելի է վերածել :

1. Զրպարտութիւն, ԹՈՒՆԱԻՈՐՈՒՄ և ամբաստանութիւն ոստիկանութեան մօտ : Այս դէպքերը մեզմէ շատ աւելի լաւ կրնան բացատրել, Գեր. Եղիշի Եպիսկոպոս Ապահունի, Շահրոզեան եղբարք և իրենց շուրջը եղողները, Յակոբ Օհանեան. Աւետիս Նազճեան կամ Ալօ Պէլէրեան, Վահան Բիւզանդեան, Գարեգին Պահլաւ, Աղբատախանամ Ընկ. ինչ որ Մատակարարներ հին ու նոր և ուրիշներ :

2. Արգելափակում և քաջան իր գոյքերուն և թղթերուն ևն, բացի կառավարութեան վճռով ծախուածներէն, որուն հաշուական թղթերը Առաջնորդարանը կը գտնուին, իսկ համարատուութիւնը մինչև ց'այսօր տեղի ունեցած չէ օրինաւորապէս, ու անորոշութեան մէջ կը մընայ տակաւին :

Խնդրոյն այս մասը աւելի լաւ կրնան բացատրել Գեր. Աղանունի

Առաջնորդը և Տեղապահը՝ Յարու. Թիւն քհնյ. Յակոբեան, եթէ չափազանցուած յաւելուածներով չ'խօսին. անցեալ շրջանի պատ. Գաղաբ. Ժողովոյ անդամները՝ Տ. Տ. Ատոմ Ասլանեան, Մարտիրոս Արեան, Տր. Գէլէճեան և Ճէպէճեան. չ'մոռնանք նաև Առաջնորդարանի Դիւանապետը Պ. Նազարէթ Աղազարմեանը՝ իր արքանակներուն հետ :

3. Յետ չորեքտասանամեայ արգելափակման, ազատ արձակումը, ապարդիւն դիմումները Առաջնորդարանին, բժշկական քննութիւնները Առաջնորդարանի պահանջման վրայ, ու այս ամենէն յետոյ, որոնց վրայ չենք ուզեր ծաննանալ առ այժմ, Տ. Ե. Թորոսեանի խնդրագիրը 1907 Դեկտ. 21 թուականաւ ապահովագրել Պատկ. Երեսփ. Ժողովոյ վսեմ. Ատենապետին զրկուած, որ դարձեալ աննկատելի կանցնի դժբաղդարար, և որուն օրինակն ալ առաջիկայ թուով պիտի հրատարակենք, բժշկական վկայականներուն հետ :

Ինչպէս դիւրին է գուշակելը, այս բոլոր դէպքերուն առջև Տ. Ե. Թորոսեան անկարելի համբերատարութիւն ունեցած է, միշտ ջանալով որ սոյն խնդիրը ազգային շրջանակի մէջ կարգադրուի, ու իր նպատակին հասած չէ և վերջապէս ստիպուած հանրային դատաստանին դիմած է՝ ուրիշ միջոցներու դիմելէ առաջ . . . :

Թէ այս խնդիրը հանրային է : Այո՛ պիտի կրկնենք՝ քանի մը պատճառներով, որոնցմէ մէկ երկուքը միայն թուենք : Նախ՝ ինչպէս յայտնի կերեալ Առաջնորդարանի մէջ գտնուած արձանագրութիւններէն, դեռ չ'հրատարակուած « անտիպ ձեռագիրներ ԳՈՂՅՈՒԱՄ են, և այդպիսի գողութիւն մը յալոյցներու համար է որ սճրագործութեանց և աններելի խաբէութեանց դիմուած է : Զեռազիրներ՝ որոնք որչափ ալ որ Տ. Ե. Թորոսեանին հետ նիւթական տեսակէտով յարաբերութիւն ունեցած ըլլան, հայ հանրութիւնը անոնց լոյս աշխարհ գալէն բարոյապէս պիտի օգտուէր. ասոր վրայ տարակուսելը ներելի չէ :

Երկրորդ՝ կուսակցութեանց անուններ շահագործուած են, գձուձ և սինըրը հաշիւներու զտնուած՝ որոնք հանրութեան այս կամ այն մասը կը ներկայացնեն և պետք էր որ անաղարտ մնային :

Երրորդ՝ ամենակարևոր անձերու անունները և ազգեցութիւնները անանկունելի և չարահար պայմաններու մէջ զոհ եղած են, որոնք պետք էր որ նոյնպէս անաղարտ մնային յայս և յօգուտ հանրութեան :

Ահա թէ ինչո՞ւ սոյն խնդիրը հանրային կը նկատենք և ինչո՞ւ հետզհետէ ալ ասոնց մանրամասնութիւնները որոշած ենք հանրութեան դիտցնել. բան մը՝ որ արժանի էր որոշ շրջանակի մը մէջ կարգադրուելով արդարութիւնը երևան բերուիլը :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Ս. Բէթէրսպուրկ 1 Մայիս. - Շուէտի իշխանները Յարսթե-Սէլօ հասան : Գիւնի 1 Մայիս. - Ողորմիները մեծ վնասներ պատճառած են : 1500 տուներ ջրատոյզ եղած են և հազարաւոր մարդիկ անպատասպար կը մնան :

Ս. Բէթէրսպուրկ 1 Մայիս. - Ուրս միայն առնուած լուրերու համաձայն Գիւրտերը սոսկալի վայրագութիւններ գործած են 2000 Պարսիկ կիներու և սողաքներու վրայ : Կառավարութիւնը 10,000 զօրք եւս կը զրկէ զստնք պատճելու համար :

Կ. Պօլիս 1 Մայիս. - Բ. դուռը վան և Մուսուլ հրաման զրկեց Գիւրտերու հարստահարութիւնները զսպելու համար Դուռը կ'ընդունի Պարսկաստանի իրաւասութիւնները իր ժողովուրդը պաշտպանելու տէսակէտով, կը կարծուի թէ Ռուսիա կարգը վերահաստատելու պատրուակով՝ առիթն օգուտ պիտի քաղէ Պարսկական զաւառները գրաւելու համար :

Ռուսիայ թուրքոյ հարցումին պատասխանելով ըստ թէ՛ կովկասի զինուորական շարժումները ուրիշ բան չեն, բայց եթէ նետեանք ներքին կացութեան :

Գորթու 2 Մայիս. - Երեկ, Գերման կայսրը զաշտային պտոյտ մը կատարելով՝ երեկոյն Սանթա Մարիա մեկնեցաւ Յունաց արքայական ընտանիքին հետ ընթերցէ յետոյ :

Թանճէր 3 Մայիս. - Ապտ-էլ-Ա. գիւղի զօրախումբերը Սաֆֆին գրաւեցին : Ժողովուրդը խիստ լաւ ընդունելութիւն ըրաւ անոնց :

Գորթու 4 Մայիս. - Հօհէնցօերն զբոսանաւը Սանթա Մարիա կղզւոյն շրջանը բրու :

Վենետիկ 5 Մայիս. - Իշխան Պիւլով Պէրլին մէկնեցաւ :

Լոնտրա 5 Մայիս - Կարիպատիական հոշակաւոր Թիւր զօրավարը մեռաւ :

Ն Ս Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Աղեք. Ս. Ս. ստացուած է. գրուածը գիղեցիկ է արդարեւ, բայց շուտ չէ՛ նօրեկի մը համար այդ ոճով քննադատութիւն մը : Թոյլ պէտք է տալ որ քիչ մ'ալ գործերը խօսին : Գրութիւնը չի հինար և երբ ժամանակը գայ, յիշեցուցէք մեզի. հանրութեան վճռոյն զնելու համար զայն :

ՆՊԱՐԱՎԱՃՍՈՒ

ՇԱՐԷ ՄՈՒՀԱՄԷՏ Ա.Ի, ՊԱՊ-ԷԼ-ՈՒԼԻԳ

Շարէ Մուհամէտ Ալիի ամբողջ գրծին վրայ կըող նպարավածառներուն մէջ, մեր վաճառատեղին միակն է որ ապրանքներու թարմութեան և մաքրութեան չնորհիւ մնալուն դիրք մը բռնած է տարիներէ ի վեր :

Նպարեղէններու վերաբերեալ ամէն ինչ՝ փոքր թէ մեծ քանակութեամբ գողներու համար, անթերի են սոյն վաճառատեղւոյն մէջ :

Մեր յաճախորդները գոհ թողելու նպատակաւ՝ սպասելի ապրանքներու ընտրութեան և գնումին տոտն շատ խնամք և նոյն իսկ բժախնդրութիւն կրնենք. Ուրեմն նպարեղէնի վերաբերեալ ամէն նպարեղ թարմ է և մաքուր մեր քով :

Կշիւրը, որուն համար ուրիշ շատ տեղեր գանգատանաց պատճառ տուած է, մեր քով գոհունակութիւն միայն առ թած է. վկայ մեր բազմաթիւ յաճախորդները, որոնք միշտ գոհ մնացած են :

Զեր տունին նպարեղէնի բոլոր պէտքերուն համար գիւնեցէք ի Պապ-էլ-Ուալը՝ մեր վաճառատեղին և չ'պիտի զղջաք :

16-41
ԿԱՐԱՊԵՏ ԳԱՍԱՐՃԵԱՆ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻԱԽՈՏԻ

ԵՒ ԸՆՏԻՐ ՄԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊՐԲԷ ՓՂՂՈՑ ԷՕՁՊԷՔԻՅԷ



ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐՔ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷՔԵԱՆ ԵՂՐԱՐՔ

ՅԱՏԿԱՆԻՇԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է .

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի ատան գներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատունը .

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարետներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար հարկ չ'կայ հոս ու հոն ժամալաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին .

Պարսկական ամենաընտիր թէմպէրի ալ և այլ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալիլ է .

Մեր վաճառատունը վերջապէս, զինքնու ածանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մասնաւոր գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբ անմրցելի է, որուն անժխտելի ապացոյցներէն մին ալ ըզրպացած Եւրոպացիներէ օրըստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են .

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷՔԵԱՆ ԵՂՐԱՐՔ

ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ . ՆԱՅՏԻՆԿԷՐ

Պալատի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ դիմաց . Գաֆէ Տը Լա Պուրսի կից
ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱՇԵՍՐԶՆԵՐՈՒ ԲԱՂԱԲՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կտրի մեքենաները Մինկըրներն են և ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է :

400 հ աւելի վկայական և մեսայներով վարձատրուած, Երաշխատեալ մեքենաներ.

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ստացած է .
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՅ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ ԵՒ ԹԱԿԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԱՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ,
ուշադրութիւն դարձնել
իւրաքանչիւր մեքենայի
վրայ Մինկըրի յատկանշին



ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ

Ձրի դասեր և նորոգութիւններ, Մինկըր մեքենայից համար, յաճախորդաց տուններուն մէջ .

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիներու և նորոգութիւն ամեն կարգի մեքենայից

Տ Պ Ա Ր Ա Ն

ԱՐՇԱԼՈՅՍ ԼՐԱԳՐԻ ՀԻՄՆՈՒԱԾ 1900 ԻՆ

ՀԱՍՏԱՏՈՒԱԾ Է Ի ՇԱՐԱ ԱՊՏ-ԷԼ - ԱՉԻՉ

ՇԷՐԻՑ ԲԱՇԱՅԻ ՊԱՐՏԷՉԻՆ ԴԷՄ

Կ'ընդունի տպագրական ամէն տեսակ յանձնարարութիւններ .

Նամակազուրի, աղբարարութիւններ, այցելարտեր, մահազոյներ, գիրքերու և պրօչիւրներու տպագրութիւններ և այլն .

Յանձնարարութեանց համար սակարկուած գնոյն կէսը կանխիկ է, իսկ մնացեալ կէսը յետ տպագրութեան՝ յանձնման պահուն վճարելի .

ԲԱՋԱՄԱՎԷՊ

ԱՄՍՍԳԻՐ

Դրական, Դեղարուեստական եւ այլն
ԿՁրդ . ՏԱՐԻ

Հասցէ՝ Rédaction de la Revue
« PAZMAVEB »

Itali St. Lazare—Venise

Ա.Չ.Գ.

Շարաքարեր Ազգային Դրական եւ
Բարոյական

Առաջին Տարի

Հասցէ՝ The « AZK » Pub. Co.

175 Tremont St. Boston; Mass.

ՄԵԾ ՍՐՃԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ

GRAND CAFE ARMENIEN (Le Caire)

Սոյն Սրճարանը որ Միսան էլ Խազնէսարի օրասուն հրապարակ

կիսն վրայ կը գտնուի, իր մաքրութեամբ և ընդարձակութեամբ ծնական մէջ յարմարագոյններէն մին է հանգստեան ժամանակ անցնելու .

Սրճարանը յաճախողներ վերոյիշեալ առաւելութիւններէն զատ հոն պիտի գտնուի նաեւ շաւարձոյն ընկերներ, նոր և ընկեր պիւրատօներ և անբերի սպասարկութիւն .

ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ
ՄԻՍՍ.Բ ՍԱՐԿԻՍԵԱՆ

ՄԻՂՐԱՆ ԿԻՐԻՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՐՈՒՄ ԴԵՐՁԱԿ

Խաչիկ փողոց թիւ 12 Էօսիեր եփեն-
սիի վաճառատան ետեւի կողմը .

Կը ծանուցանէ արդոյ ազգայնաց
թէ՛ իր վաճառատան մէջ ամեն տեսակ
կերպաներ կը գտնուին, ամենէն լաւագոյն,
զիմացկուն՝ և ճաշակաւոր ըզ-
գեսանքը պատրաստուելու համար .

Անկարելի է որ մէկը իրեն զիմէ
և գոնուակութիւն չ'յայտնէ՝ ձեւաւոր
զգեստի մը տիրացած ըլլալը փորձով
հաստատուելով .

Արեւոտին մէջ իր ունեցած հմտու-
թիւնը ամէն տարակոյտէ վեր կը մնայ,
երբ ըսուի միայն թէ՛ երկար տարիներ
պաշտօն սենեցած է Պօլսոյ նշանաւոր
ձրանասցի Բալման տանը մէջ .

Իր սակերը զիւրաւարտելի են .
այցելեցէք և գու՛ր ալ գո՛ն պիտի մնաք .
14-50

ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԻՆԱՆԵԱՆԻ

ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

ՄԵՏԱՔՍՈՎ ԲԱՆՈՒԱԾ
400 թիւէ թաղկացած
ԹԻՒՂ 5 ՂՐՇ . ՈՂՁ

Մեծ սրճարան Հայկականի մէջ
ի ցոյց դրուած սոյն անմտան մե-
տաքսեայ ձեռագործի վիճակահա-
նութիւնը՝ որուն անցեալ Փետրուար
ամսոյ մէջ տեղի ունենալը ծանուց-
ուած էր, բայց ինչ ինչ պատճառ-
ներով յետաձգուած է . անոնք
որ սոյն չ'ընաղ զարդը ունենալ կը
ցանկան, ժամ առաջ թող զիմեն
« Արշալոյս » ի տպարանը Տ . Գէորդ
Փափագեանի՝ մնացեալ սակաւաթիւ
տոմսերէն գնելու համար, որմէ
անմիջապէս յետոյ տեղի պիտի ու-
նենայ վիճակահանութիւնը Հայկա-
կան սրճարանի մէջ կանխաւ ծա-
նուցուելով .

ՏՕՔՔ ԵՍՊԷՐ Լ. ՃԷՔՈՊԵԱՆ

ՇԱՐԱ ՆՈՐՊԱՐ ԲԱՇԱ . ԹԻՒ 20

Ամերիկայի համալսարաններէն
վկայեալ և անուանի հիւանդանոցնե-
րու մէջ գործնական փորձառութիւն
ստացած բժշկուհի . յաշողակ վի-
րահատ՝ ենթակային առանց ցաւ
պատճառելու .

Մանկաբարձուհի և մասնագէտ՝
կանանց ծննդական գործարաններու
և ախրոդիտեան արտերու, իսկ մա-
նուկներուն՝ ամէն տեսակ հիւան-
դութիւններու .

Կատարեալ խնամքով և գի-
տական նորագոյն մեթոտներու շնոր-
հիւ հիմնապէս կը բժշկէ իր խնամոյց
յանձնուած հիւանդները .

Հիւանդ կ'ընդունի անկն օր կիս օրէ
յետոյ ժամը 2-5

Ա.ՄԷՆ Երեւոթքի աղբասց ձրի
դարձանում .

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՍՈՒԼԹԱՆ

ԱՊՏԻՒԼ ՀԱՄԻՏ ԻՆՉՊԷՍ ՄԵՌԱԻ
ԺՈՂՈՂՈՒՐԻՆ ՄԱՏԵՆԱՒԱՐԱՆԸ ԹԻՒ 3
ԳՐԲՈՅԸ

ԳԻՆ ՄԷԿ ՅՐԱՆԻ
Դահլիճէն կրնան զիմեջ ԱՐՇԱԼՈՅՍԻ
Տպարանը՝ եւ Արուստաններէն Հե-
ղինակին հետեւեալ հասցեով .

M. ARAM
Grand Café Arménien
Le Caire - Egypte